

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. Medicaid-ի/Medi-Cal-ի կրճատումները կվնասեն դպրոցներին և հատուկ կրթությանը

Մեպտեմբեր 2017թ., Հրատ. #F105.10 - Armenian

Ի՞նչպես կվնասեն Medi-Cal-ի/Medicaid-ի կրճատումները հատուկ կրթությանը:

Այսօր Կալիֆորնիայում դպրոցները ծախսում են **180 միլիոն ԱՄՆ դոլար** Medi-Cal-ի/Medicaid-ի համար՝ աշակերտներին, հատկապես հաշմանդամություն ունեցող աշակերտներին մատուցվող ծառայությունների դիմաց վճարելու համար: **Այդ գումարից ավելի քան 90 միլիոն ԱՄՆ դոլարն ստացվում է դաշնային կառավարությունից:** Կոնգրեսում հնչած վերջին առաջարկություններով Medicaid-ի համար տրամադրվող այդ պետական գումարները կկրճատվեն կամ կփակվեն:

Դպրոցները Medi-Cal-ի համար հատկացված միջոցները հաճախ օգտագործում են երեխայի Անհատականացված կրթական ծրագրով (անգլ.՝ Individualized Education Plan, IEP) նախատեսվող ծառայությունների դիմաց վճարելու համար: Համապատասխանող երեխաների համար Medi-Cal-ն օգնում է վճարել հատուկ կրթության այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են.

- օկուպացիոն և ֆիզիկական թերապիա,
- բուժքույրական խնամք,
- հոգեկան առողջություն և
- դասարանում օգտագործվող օժանդակ միջոցներ

Medi-Cal-ը վճարում է նաև հաշմանդամություն ունեցող աշակերտների քայլակների, անվասայլակների, խաղահրապարակի հատուկ սարքերի և օժանդակ տեխնոլոգիաների համար:

Դպրոցները Medi-Cal-ի միջոցներն օգտագործում են նաև դպրոցի բուժքույրերին և հոգեբաններին, ինչպես նաև դպրոցում իրականացվող առաջնային բուժօգնության և կանխարգելիչ ծառայությունների, օրինակ՝ բոլոր աշակերտների համար անցկացվող տեսողության և լսողության սքրինինգի համար:

Ի՞նչ վնաս կհասցնեն Medi-Cal-ի/Medicaid-ի կրճատումները մեր դպրոցներին:

Աշակերտների առաջադիմության անկում. հետազոտությունները ցույց են տալիս, որ Medicaid-ի կամ այլ բժշկական ապահովագրություն ունեցող աշակերտներն ավելի հակված են կանոնավոր կերպով դպրոց հաճախելուն, ավագ դպրոցը և քոլեջն ավարտելուն, քան բուժօգնության հնարավորություն չունեցող աշակերտները: Նրանք ստանում են ավելի բարձր աշխատավարձեր և ապրում են ավելի երկար և ավելի առողջ: Medi-Cal-ի/Medicaid-ի գումարների կրճատման հետևանքով ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների մի մասը կարող է դուրս մնալ ծրագրից և բաց թողնել հաջողության օղակը:

Բացակայությունների և արձակուրդների բարձր ցուցանիշեր.

հիվանդությունը թիվ մեկ պատճառն է, որի համար աշակերտները բաց են թողնում դպրոցի դասերը: Medi-Cal-ի/Medicaid-ի հատկացումների կրճատումը կարող է նշանակել, որ ավելի շատ երեխաներ անվերահսկելի ասթմայի, ատամնացավի և այլ հիվանդությունների պատճառով կմնան տանը իրենց անհրաժեշտ բուժօգնությունն ստանալու փոխարեն: Հետազոտությունը ցույց է տալիս, որ քրոնիկ բացակայող աշակերտներն ունեն ավելի թույլ սոցիալական հմտություններ մանկապարտեզի համար, դժվար են կարդում երրորդ դասարանում և ավելի շատ են դուրս գալիս ավագ դպրոցից: Եվ սա կարող է կրկնակի վնաս հասցնել տեղական դպրոցների բյուջեներին,

քանի որ հաճախումների ցածր մակարդակը հանգեցնում է նրան, որ նահանգին հատկացվում է ավելի փոքր ֆինանսավորում:

Վաղ սրբինինգի և բուժման կրճատում. Դպրոցներն ու համայնքային կազմակերպությունները լսողության և տեսողության խանգարումներ, թերզարգացում և սովորելու ունակության վրա ազդող հաշմանդամություն, օրինակ աուտիզիմ ունեցող երեխաներին նույնականացնելու և բուժելու համար ներկայումս օգտվում են Medicaid-ի բժիշկների կողմից խորհուրդ տրվող Վաղ և պարբերական սրբինինգ, ախտորոշում և բուժում (անգլ.՝ Early and Periodic Screening, Diagnosis, and Treatment, EPSDT) ծրագրից: **Medicaid-ի կրճատումը կարող է նվազեցնել EPSDT ծրագրի կիրառումը՝ թողնելով երեխաներին զարգացման և սովորելու հետ կապված չախտորոշված և չբուժված խանգարումներով,** սա խանգարում է իրականացնել բոլոր երեխաներին մանկապարտեզի համար պատրաստելուն ուղղված վաղ կրթական նախաձեռնությունները և թուլացնում է այն ընդհանուր աշխատանքների ազդեցությունը, որոնք նախատեսված են յուրաքանչյուր երեխային մինչև երրորդ դասարանի ավարտը վարժ կարդալ սովորեցնելու համար:

Հոգեկան առողջության ավելի քիչ ռեսուրսներ. Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ ստացող 10 աշակերտից 7-ն այդ ծառայություններն ստանում են դպրոցում: Դպրոցի հոգեբանա-խորհրդատվական ծառայությունները հաճախ ֆինանսավորվում են Medicaid EPSDT ծրագրի կողմից:

Մենք ուզում ենք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային

Էջ 4՝ 4-ից

Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա)
հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: